ԿԱՐԾԻՔ

Ա. Սմբատյանի «Օպերատիվ-հետախուզական գործունեությունը քրեական դատավարությունում» թեմայով ԺԲ.00.04. – «Դատական իրավունք» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Ա. Սմբատյանի աշխատանքը վերաբերում է օպերատիվ-հետախուզական գործունեության և քրեական դատավարության փոխհարաբերակցության հարցերին: Թեմայի արդիականությունը, հետազոտման խնդիրները և նպատակները հիմնավորված են պատշաճ ձևով:

Իմ կողմից 27.01.2021թ. տրվել է եզրակացություն՝ Ա. Սմբատյանի ատենախոսությունը հրապարակային պաշտպանության երաշխավորելու վերաբերյալ:

Որպես պաշտոնական ընդդիմախոս, աշխատանքը խորությամբ ուսումնասիրելու արդյունքում առաջացել են որոշ նկատառումներ:

Նախ՝ ատենախոսը չի անդրադարձել 24.03.2021թ. ընդունված «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի դրույթներին, որտեղ առաջին անգամ քննչական մարմնին վերապահվել է նաև «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով սահմանված կարգով օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնելու լիազորություն: Օպերատիվ-հետախուզական գործունեության և քրեական դատավարության փոխհարաբերության վերաբերյալ մեկ դարից ավել քննարկվող հարցերի հետ մեկտեղ պետք էր կանխատեսման մեթոդի միջոցով վերլուծվեր նաև օրենսդրական այս նորամուծությունը:

Երկրորդ՝ ատենախոսության 2.2 պարագրաֆի վերտառությունն է «Օպերատիվ-հետախուզական միջոցառումների և քննչական գործողությունների փոխհարաբերակցությանն ըստ ՀՀ օրենսդրության»: Վերնագրից կանխատեսվում էր, որ հեղինակը պետք է այս հարցը քննարկեր առավելապես պոզիտիվ-իրավական վերլուծության ձևաչափով, սակայն 91-99 էջերում նա անդրադարձել է կրիմինալիստիկայի և օպերատիվ-հետախուզական գործունեության տեսության հարցերին: Ավելին, աշխատանքի 96-րդ էջում նշել է. «Օպերատիվ-հետախուզական

գործունեությունը որպես տեսություն, զարգանալով՝ ձեռք է բերել ինքնուրույն բնույթ, **կարգավորման առարկա և մեթոդ**»:

Ատենախոսը փաստացի չի տարանջատում օպերատիվ-հետախուզական գործության՝ որպես օրենսդրության և որպես տեսության գործառույթները: Վտանգավոր է, երբ գիտական աստիճան հայցող անձը չի տիրապետում իրավագիտության հիմնարար, միևնույն ժամանակ՝ տարրական այնպիսի գիտելիքի, ըստ որի՝ օրենսդրության (իրավունքի) ճյուղը իրականացնում է կարգավորման գործառույթ, ուստի ունի **կարգավորման առարկա և մեթոդ**, իսկ իրավունքի ճյուղը որպես գիտություն (տեսություն), ոչ թե կարգավորում, այլ հետազոտում է երևույթները, ուստի ունի **հետազոտման առարկա և մեթոդ**:

Այնուամենայնիվ, կաշկանդված լինելով իմ կողմից 27.01.2021թ. տրված եզրակացությամբ, պետք է նշել, որ Ալիսա Մանվելի Սմբատյանի «Օպերատիվ-հետախուզական գործունեությունը քրեական դատավարությունում» թեմայով թեկնածուական ատենախոսությունն, ընդհանուր առմամբ, համապատասխանում է ներկայացվող պահանջերին, իսկ հեղինակն արժանի է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Արթուր Ղամբարյան
Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ վաստակավոր իրավաբան

Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ղամբարյան Ա.Ս.-ի ստորագրությունը վավերացված է բանասիրական գիտությունների թեկնածու, ՀՌՀ Գիտական քարտուղար Կասաբաբովա Ռ.Ս.-ի կողմից